



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէց)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւոր թաւին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1899 ГОДЪ

(Пятьдесят-четвертый годъ изданія)

На газету

„КАВКАЗЪ“

Съ 1-го января 1897 года „КАВКАЗЪ“ выходитъ подъ редакціей

В. Л. ВЕЛИЧКО.

Въ 1899 году газета будетъ издаваться по той-же программѣ, какъ и въ прошломъ году.

Подписная цѣна остается безъ измѣненія, а именно:

Съ доставкою въ Тифлисъ:	Съ пересылкою иногороднымъ:	По почтовому союзу:
На годъ 11 р. 50 к.	На годъ 13 р. —	На годъ 13 р. 40 к.
„ 1/2 года 6 р. — к.	„ 1/2 года 7 р. —	„ 1/2 года 10 р. —
„ 3 мѣс. 3 р. 50 к.	„ 3 мѣс. 4 р. —	„ 3 мѣс. 6 р. —
„ 1 мѣс. 1 р. 50 к.	„ 1 мѣс. 1 р. 75 к.	„ 1 мѣс. 2 р. —

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, при чемъ иногородными вносятся по 3 руб.: при подпискѣ, 1-го марта и 1-го мая и по 2 руб.—1-го іюля и 1-го сентября; городскими въ тѣ же сроки: 3 р., 3 р., 2 р., 2 р. и 1 р. 50 к.

Контора „Кавказа“, во избѣжаніе недоразумѣній проситъ гг. иногородныхъ подписчиковъ точно опредѣлять въ случаяхъ высылки денегъ менѣе 13 рублей (цѣна годовой подписки), желаютъ ли они получать газету въ разсрочку, или на сроки, соотвѣтствующіе присланнымъ суммамъ.

NB. Подписка и объявленія принимаются по нижеслѣдующему АДРЕСУ:

Г. Тифлисъ, Эриванская площадь, домъ Харазовой.

1—3

Այս րի ա ի կ ի ն Դ յ ի ն ու չ է Ձ ի լ ի ն կ ի թ ե ա ն ց ը՝ ի ր զ ա ա կ ն եր ու մ և հ ա ռ ա տ վ, Յ ա ռ ու լ ի լ ի ն Կ ո ղ ա ր ե ա ն՝ ը ն տ ա ն ի թ ու մ և Ա ռ շ ա մ Ձ ի լ ի ն կ ի թ ե ա ն ց ը՝ ձ օ Ր և ե ղ ղ ա յ ը ն եր ի Ն ե տ, ս ր տ ի ց ա լ ու մ յ ա ղ տ ն ի լ ու մ ա ղ զ ա կ ա ն ն եր ի ն և ծ ա ն օ թ ի ն եր ի ն՝ ա մ ու լ ու լ ու, ի թ ա ն ց ձ օ Ր, ա ն եր ո ղ և հ օ թ ե ռ օ Ր՝ մ ա ճ ա ն ի թ

Յ Ա Կ Ո Ր Յ Ո Վ Ա Կ Ի Մ Ե Ա Ն Ձ Ի Լ Ի Ն Կ Ի Ր Ե Ա Ն Ց Ի

մ ա ճ ը, որ տ ե ղ ի ու Ն ե ղ ա ա մ ու ի ճ ի ն, յ ա ղ տ ն ու մ ե ն, որ թ ա ղ ու մ ը կ ղ կ ա տ ա Ր ի շ ա ռ ա թ, ա մ ու ի 12 ի ն, Թ օ ղ ի մ ա ղ ի գ ե ռ ե զ մ ա ն տ ա ն ը. յ օ ղ ղ ա Ր կ ա ռ օ թ ի լ ի ն ը կ ղ ս կ լ ի ա ա ա ա ա ա ա ա մ ժ ա ի 10 ի ն Գ ա մ յ ի ն ց ե ղ ե ղ ե ղ ու. զ ա լ թ ի ս ե ն հ ա կ ի ց ղ շ ա ի ն ո ղ ի ն ե ղ ե ղ ի ն: Ա ղ ը ի ղ ը ը՝ ա մ ու ի 11 ի ն, կ ե ղ ի յ ե ա ն ժ ա ի 6 ի ն:

2—2

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներքուստ շատ ճիշդ էր ասում մի յայտնի ռուս հրապարակախոս, թէ Ֆինանսիան գտնվում է Պետերբուրգի կողքին, ներկայացնում է խիստ հետաքրքրական և օրինակելի երկիր, սակայն մենք այնքան անտարբեր ենք, որ նրա ժողովրդական բարձրագույն դպրոցների մասին ստիպված ենք տեղեկություն քաղել հեռավոր Սիբիրում հրատարակվող մի լրագրից:

Այդ տեղեկությունները տպված են «Сибирский Листок» լրագրում և այնքան հետաքրքրական են, այնքան խորին ուշադրություն արժանի, որ մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել նրանց հետ ընթերցողներին:

Ֆինանսիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների սկիզբը դրվել է 1888 թվից և ներկայումս գոյություն ունեն 20-ից աւելի այդ տեսակի դպրոցներ 600 ուսանողներով: Այս դպրոցները հիմնվում են բարեգործական ընկերությունների վանքերով, սկզբում գրեթէ առանց մի և է նրվական հաստատուն միջոցների, միայն հասարակության աջակցութեամբ: Այնպէս որ այս տեսակի դպրոցը հիմնվելու գրեթէ բաղդի բերմունքին է թողնվում, հաւատարմած լինելով, որ հասարակութիւնը թիշլ չի տալ, որ բարի գործը խորտակվի: Եւ իրաւ, այն դպրոցը, որը հիմնարկելու չէին խանութ, թէ ինչպէս պիտի իր գոյութիւնը պահպանի, չէնց առաջին տարվայ ընթացքում ժողովրդի համակրութիւնը վաղեղելով՝ հաստատվում և դառնում է մշտական հիմնարկութիւն: Ժողովրդական բարձրագույն դպրոց բանալու համար հարկաւոր չէ որ և է թողնուած ինչորեք ֆինանսական իշխանութիւններից, այլ միայն դպրոցը բանալուց

յետոյ պէտք է այդ մասին լմաց տալ նրանց:

Դպրոցի յարատեւութեան նպատակն են ծախսերի չափազանց ընդլիկումը և օրինակելի խրախուսութիւնը: Այնտեղ ոչ ուսուցչական բաղձանդամ խումբ կայ, ոչ մեծ-մեծ ուսնիկներ ըստացող ուսուցիչներ, ոչ հակադական շինութիւններ, դրանք մեծ մասամբ տեղաւորվում են պաշտօնեաների սենեակներում: Դպրոցական պիտույքների համար ևս մեծ ծախսեր չեն լինում: Դպրոցը, չափաւոր ուսնիկով, կառավարում է մի տեսուչ, որին յատկացնում է երեք փոքրիկ սենեակ, երկու ուսուցիչ, որոնք նոյնպէս շատ էժան են նստում: Ուսուցիչներն ապրում են հարեան գիւղացիների խրճիթներում: Ուսանողները կերակրվում են ընդհանուր սեղանից: Կենտրոնները պատրաստում են իրանք ուսանողները: Իսկ միջերկրի համար դրամ ձեռք է բերվում իրանց, ուսանողների հաւաքած անդամավճարով: Գործի այս դրովեան չնորհիւ իւրաքանչիւր ուսանողի ամսական ծախսը 8 կամ շատ-շատ 10 ռուբլուց աւելի չէ անցնում: Դպրոցն ամբողջովին տեղաւորվում է մի տան մէջ, ուր գետնոված են մի դասարան, մի քանի արհեստանոցներ, ձեռագործի սենեակը, խոհանոցը և տեւի բնակարանը:

Իւրաքանչիւր ցանկացող կարող է դպրոց մտնել: Ուսման վճարը 5 ռուբլի է տարեկան, այն էլ նրա համար, որ դպրոցներն ապառ իւրեն ղառարկապարտ անհատներից: Ուսանողները մեծ մասը գիւղական դասակարգից է: Միայն սովորում են երկու սեւի անձինք: Սովորաբար ընդունվում են 16—20 տարեկան անձինք, բայց լինում են նաև 30—35 տարեկաններ: Ուսումը տևում է ձմեռվայ վեց ամիսը: Դպրոցում աւանդվում է կրօն, ընդհանուր աշխարհագրութիւն, մաթեմատիկա, ֆիզիքա, քիմիա, բուսաբանութիւն, բնախօսութիւն, կենդանաբանութիւն, ճարտասանութիւն և իրաւաբանութիւն: Դպրոցների գրադարանները կարճ միջոցում լցվում են ամեն տեսակ հրատարակութիւններով: Ֆինանսի լեզուով հրատարակվող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Գործել պէտք է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աղամ Միգելովիչ. Մի նախադիւծ. Հայոց ներկայացումները Բագրում. Նամակ Վաղարշապատից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բոլորիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժողովրդական բարձրագույն դպրոցների ֆինանսիայում:

ԳՈՐԾԵԼ ՊԵՏԳ Է

«Մշակի» անցեալ համարում տպվեց Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդի հրաւերը՝ օգնել Թաւրիզի առաջնորդարանին՝ պարսկական Գիւրգոտանի հայերի անտեսական, մոռաւոր և հոգեւոր վիճակը բարւոքելու համար: Սոտ հազար տուն հայ պարունակող այդ դաւառը զտնվում է ամենաթշուառ վիճակի մէջ. ժողովուրդը ոչ միայն աղքատ է, այլև չը զիտէ իր մայրենի լեզուն, խօսում է լեռներէն, կամ աւելի ճիշդն ասած՝ բըրդերէն, չունի մի հատ քահանայ և ուսուցիչ, որովհետև անկարող է հոգալ նւրանց ծակերը:

Տարիների ընթացքում «Մշակը» չէ դադարել իր թղթակցութիւններով և յօդուածներով հրաւիրել հայոց հոգեւոր իշխանութեան յորժ ուշադրութիւնը Ատրպատականի այդ մասում ապրող հայերի թշուառ վիճակի վրա, բայց հոգեւոր իշխանութիւնը շարունակ խուլ է մնացել այդ յորդոցներին: Քանիքանի առաջնորդներ են եկել, զնացել և սակայն ոչ միւր նրանցից չէ նկատել, որ 1000 տուն հայ ունեցող մի ամբողջ դաւառ ոչ միայն թըքալօս է, այլև չունի քահանայ և ուսուցիչ: Այդ առաջնորդները կանօնաւոր կերպով ստացել են աթոռահարկ, ծխա-

հարկ, դրամական նուէրներ հայաբնակ ուրիշ քաղաքներից և սակայն մի կօպէկ անդամ չեն գործադրել թշուառ հօտի նոյն իսկ տարրական հոգեւոր և բարոյական կարիքներին բաւարարութիւն տալու: Եւ հասարակութիւնն էլ, տեսնելով որ տրված նուէրները նպատակին չեն հասնում, դադարեց աջակցելու առաջնորդարանին. ինքն էջմիածինը, գրաւելով վախճանված առաջնորդներին — Մուշեղեանի, Մխիթարեանի, Կարապետեանի հազարներ արժեքող դրոքը, մի րօպէ չը մտածեց՝ դոնէ այդ դրոքի մի չնչին մասը գործադրել Ատրպատականի հայ հօտի կարիքների վրա, լաւ իմանալով որ իր ստացած ժառանգութեան մէջ այդ իսկ ժողովրդի աւելբերը մեծ տեղ են բռնում:

Պարսկաստանի պէս երկրում, ուր առաջնորդները հանդիսանում են ազգային և հասարակական բոլոր գործերի ղեկավար, մասնաւոր և ընդհանուր նախաձեռնութեան համար շատ քիչ ասպարէզ կայ. ազնիւ, անշահասէր, գործունեայ և անձնուէր առաջնորդը հրաշքներ կարող է գործել: Բայց առաջ պէտք է գործել, պէտք է ցոյց աալ հասարակութեան, որ կայ բարի կամք, ցանկութիւն, եռանդ գործելու. պէտք է ապացուցանել, որ հասարակութեան տուած նուէրները չեն մոնի այս և այն կերականի գրգանք, այլ կը ծառայեն իրանց նպատակին: Եւ հաւատացէ՛ք՝ հասարակութիւնը կը շտապի աջակցել այդպիսի գործունեայ հովիւներին և անտարբեր չի գտնվի զէպի նւրանց հրաւերն ու յորդոցները:

Այն հանգամանքը, որ այժմեան թեմակալ առաջնորդը չը նայելով իր կարծատեւ, հինգամենայ պաշտօնավարութեան, կարողացել է լուրջ ուշադրութեան առնել պարսկական Գիւրգոտանի հայերի անջիկ, խօսում էր տնային տնտեսութեան մասին. նա պնդում էր, որ խիստ կարեւոր է կնոջ որոնային տնտեսութիւնը, որով նա կարողութիւն է տալիս ընտանիքի իւրաքանչիւր անդամին անվրդով աշխատել և հաճախով հանգստանալ ընտանեկան օջախի մօտ: Նորորդ խօսողը մի չափահաս աղջիկ էր. նա բնաբան էր ընտրել բարդ դատարարութիւնը: Նրա կարծիքով բաղդաւոր է այն անհատը, որը չընպատված է բարեբաւտիկ պայմաններով...

—Յիրաւի, այս օրբան հեռու է մեզանից, մեր կեանքից,—բացականչում է յօդուածագիր օրորդը:

Հետեւալ դարը նուրված էր օրէնսդրութեան Բայց օրէնսդրութիւնը Ֆինանսիայի ժողովրդական բարձրագույն դպրոցում այնպէս չեն սովորում, ինչպէս որ կարելի է ենթադրել: Այստեղ օրէնսդրութիւնը ուսումնասիրվում է գործնականապէս: Ամբողջ դասարանը ձևացաւ գիւղական ժողով: Ժողովի անդամներից մէկը (այսինքն աշակերտներից մէկը) առաջարկեց ժողովրդական դպրոց բանալ: Մնացած անդամները (որանց մէջ էին տեսուչը, ուսուցիչները և տեսչի կինը) եռանդով ընդադատում էին այդ առաջարկութիւնը, պատճառաբանելով գործի ինչպէս դրական, նոյնպէս և բացասական կողմերը: Տեսուչը, ուսուցիչները, նոյնպէս և տեսչի կինը ջերմագին մասնակցում էին վիճարանութիւններին, իբրև հասարակ անդամներ. նրանց կարծիքները արժակ համարձակ հերքում էին աշակերտները: Առաջարկութիւնը մանրամասնաբար ըննադատեց ժողովը և, ի հարկէ, վճռեց ընդունել այդ առաջարկութիւնը և բանալ դպրոցը:

Ահա թէ ինչպէս է գնում Ֆինանսիայում ժողովրդի կրթութեան գործը: Կարծեմ աւելորդ է դանդաղան եղրակացութիւնները անել: Փաստերն ինքն ըստ ինքեան պերճախօս են, գրութիւնն ինքն ըստ ինքեան նախաձեռն է և, ուրեմն, օրինակելի:

Գ. Բաղդեան

մխիթար վիճակը, ցոյց է տալիս, որ նա մտադիր չէ հետեւել իր նախորդներին և Երմիաքի շաւղին և մենք համոզված ենք, որ հայ հասարակութիւնը ևս, տեսնելով նոր առաջնորդի գործունէութեան առաջին պտուղները, իր կողմից ևս չի խնայել իր նիւթական և բարոյական աջակցութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂԱՍՄ ՄԻՑԵՎԻԶ

Այսօր, դեկտեմբերի 12-ին, Վարչախոսում պէտք է կայանայ մի մեծ ազգային հանդէս, լեւերն այսօր արձան պէտք է կանգնեցնեն իրանց հոգեկան բանաստեղծ Աղամ Միգիւկի յիշատակին, նրա ծննդեան հարիւրամակի առթիւ, որ լրանում է այսօր: Եթէ ի նկատի ունենանք, որ Միգիւկի անունը վաղուց դարձել է լեւերի համար մի մոգական անուն և ամեն մի լեւացու մէջ բուռն ոգևորութիւն է առաջ բերում, ուրեմն չը պէտք է զարմանանք, որ այսօր, ինչպէս ճիշդ նկատում են ուսուցիչ լրագրիւնները, Վարչախոս ակնատես պէտք է լինի մի այնպիսի ազգային մեծ տօնախմբութեան, որին ակնատես եղաւ Մօսկվան 1880 թ.ին, Պուշկինի արձանի բացման օրերին:

Լեւ ազգի համար Միգիւկի ունեցած մեծ նշանակութիւնը հասկանալու համար, պէտք է իմանալ, որ նրա անունը անխնայ կերպով կապված է լեւերի հասարակական կեանքի մի ամբողջ է պօխայի հետ. այդ է պօխան լի է վշտերով, ծանր ցաւերով, սխալներով, ոգևորութիւններով և հրաշալիութիւններով: Եւ հէնց նրա համար է լմանգ բանաստեղծն իր ազգին, որ նա այդ ազգի կրած ծանր փորձանքների և տառապանքների ժամանակն ապրել է նրա կեանքով, այրելով, տոչորվել է նրա ցաւերով, տանջվել է նրա վշտերով և հրճվել նրա ուրախութիւններով:

Անդնաճառելի կը մնայ յաւիտեան այն ծառայութիւնը, որ Միգիւկի մատուցել է իր մայրենի լեզուին. նա վերանորոգել լեւական ինքնաբանությունը, թարմութիւն և կեանք ներշնչել նրան, տալալով կրօնական վերածնունդ, մաշված ոգին և մտքներով նրա տեղ ու մասն տի գ զ ը: Բանաստեղծը, թողնելով Պարսկան պալատները, իր ստեղծագործութեան նիւթը քաղում էր ժողովրդական առնչութիւններից և իր անձնական զգացումներից, որոնք այնքան մեծ ցնցումներ էին կրել. ցնցումներ, որոնց հաղորդակցել էր եղել ամեն մի լեւ: Նրա հզօր տաղանդը, իբրև պայծառ աստղ, փայլեց մանաւանդ «Պան Տաղէու» պօխայի մէջ, ուր բանաստեղծը թափել էր իր ամբողջ հոգին և մերկացրել իր ամբողջ սիրտը:

Աղամ Միգիւկի ծնվելը 1798 թ.ի դեկտեմբերի 12-ին, Լիւովայում, Նովոգորոդի քաղաքում, իր սկզբնական կրթութիւնն ստացաւ այդ քաղաքի Դոմինիկական վանական դպրոցում, որտեղից մտաւ Վիլնայի համալսարանը: Այդտեղ, ուսանողական շրջաններում, բանաստեղծութեան և գրականութեան մասին եղած վիճաբանութիւնների մէջ նա տողորկեց նոր գաղափարներով, նոր իդէալներով: Գեռ ուսանող ժամանակ նա կրեց մի ծանր հարուած—սիրաբանից, բայց նրա սիրած աղջիկը, Մարիա Վերեշչակ, ամուսնացաւ ուրիշի հետ և այդ դժբաղդութիւնը քիչ մնաց տապալել Միգիւկի: Նրա կրած հոգեկան տանջանքները արտայայտեցին հրաշալի «Ջիւալի» պօխայի, որ լի է վշտահար սիրով, յուսահատ հոգու եռանդուն բողբոջներով: 1824 թ.ի կալանաւորութիւնից յետոյ, բանաստեղծը տեղափոխվեց Պետերբուրգ, արքեպիսկոպոսի Մօսկվայում: Այդտեղ նա ծանօթացաւ այդ ժամանակվայ ուսուցիչ նշանաւոր գրական գործիչների և բանաստեղծների—Վեռնիսկու, Պուշկինի, Բարեստինսկու և ուրիշների հետ, որոնք մեծ համակրութիւն ցոյց տուին նրան, փայփայեցին և միխիթարեցին վշտահար բանաստեղծին: Մօսկվայում նա դրեց իր մի խոշոր հեղինակութիւնը—«Կօնրադ Վալենտով», որի իդէան մինչև այսօր էլ քննադատութեան համար վիճաբանութեան նիւթ է: 1829 թ.ին նա կարողացաւ վերջապէս թողնել Մօսկվայի արտասահման գնալու, որտեղից այլևս չը վերադարձաւ: Հայրենիքը: Նրա այդ ծանաղարջորդութեան առիթով Պուշկին գրեց մի գեղեցիկ ոտանավոր, որ, ի միջի այլոց, ասված է. «Онъ ушелъ на западъ—и блagosловенъemъ мы его проводимъ»: Պարիզում նա կարողացաւ ստանալ սլավոնական դերականութեան ամբիօնը՝ College de France-ում, 1840 թ.ին, բայց 1844 թ.ին ստիպվեց թողնել այդ պաշտօնը: Բազմաթիւ ձախողութիւնների հանդիպելուց յետոյ, նա 1855 թ.ին գնաց Կ.

Պոլսո, այդտեղ լեւական լեզվոնքը կազմելու համար, բայց խօսքերով բռնկվելով վախճանվեց: Նրա մարմինը փոխադրվեց Պարիզ և թաղվեց Մօսկովայի գերեզմանատանը, բայց 1890 թ.ին մեծ հանդէսով տեղափոխվեց Վրակով և այդտեղ յաւիտեակն հանդիստ գտաւ: Լեւերը Կրակովում ևս մի գեղեցիկ արձան են կանգնեցրել. իսկ այսօր, կառավարութեան թողնուլով համար, այդպիսի արձան կանգնեցնում են և Վարչախոսում:

ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

Մայրաքաղաքի լրագրիւնները հաղորդում են, որ շուտով պետական խորհուրդը պիտի քննէ պետական բնակարանական հարկի (տես մեր յօդուած, «Մշակ» № 123) քաղաքային դարձնելու առաջարկ-նախագիծը:

Քաղաքային ինքնավարութիւնները ուրեմն կը ստանան մի նոր, թէև համեստ աղբիւր, իրանց բազմապէս կարիքները լրացնելու համար: Եւ եթէ մտաբերենք, որ նոյն ինքնավարութիւնները 1900 թ.ականից վերջապէս կազմավեն իրանց վրա ծանրացող բանտային ծախսերից (տես մեր յօդուած, «Մշակ» № 115), նոյնպէս գնաւորականները բնակարանների լրացուցիչ ծախսից, եթէ յիշելու լինենք, որ բացի սովորական տուրքից, որ մինչև այժմ ստանում էին քաղաքները և զեմսովոնները առևտրական և արհեստաւոր դասակարգից, նրանք մասն կունենան նաև առևտրական ուրիշ հարկերից (այսպէս անուանված՝ լրացուցիչ, պրօցենտային հարկեր), ինչպէս արդէն որոշել է պետական խորհուրդը յունիսի 8-ին առևտրի և արտաւտի նոր հարկահանութեան օրինագիծը հաստատելիս. ինչպէս նաև նոյն խորհուրդը նորերս մտցրած ներքին գործերի միջնորդի առաջարկը՝ պոլիցիա պահելու ծախսից ազատել մի շարք քաղաքներ, որոնց միջոցները սուղ են,—յիշելով այս ամենը, մենք տեսնում ենք մի շատ համակրելի տեսնող ենցի—միջոց տալ տեղական ինքնավարութիւններին հոգալ աւելի տեղական կարիքների լրացման. կարիքների, որոնք մինչև այժմ առանց հոգացողութեան էին մնում, չը նայելով իրանց ցանցածնութեան, որովհետեւ իրիւրմէն բեռնաւորած էր պարտաւոր եցուցել ընդհանուր պետական ծախսերով: Նոյն համակրելի ձգտումը մենք նկատում ենք և զեմսովոյի վերաբերմամբ, բայց մենք այստեղ դրա վրա կանգ չենք առնել, քանի որ այդ խօսքը օտար, խորթ է Վոլկսայի համար...

Բնակարանական հարկի քաղաքներին տալը գոյց է ունենայ և մի ուրիշ, աւելի նշանաւոր և բարեբար հետեանք, մեղմացնելով քաղաքային ինքնավարութեան այն պակասութիւնը, որի վրա վաղուց մատնացայել է անուս մամուլը (տես օր. Отеч. Запис. 84 թ. Наше городское самоуправление): Այդ այն է, որ քաղաքներում արդու, բայց միակ ընտրողական ցէղ տուող անշարժ կայքից զուրկ բազմաթիւ դասակարգը իրանց ցանցածնութեան պատճառով զործելի: Անշուշտ բնակարանատէրերից մի որոշ մասը այժմ իրաւունք կը ստանայ մասնակցել քաղաքային ընտրութիւններին՝ այդ հարկի միջոցով ցէղ ձեռք բերելով: Եւ ինտելիգենտ դասակարգը, որ մեծ մասամբ զուրկ էր ցէղից և պատկանում է տնկեցիների շարքին, այժմ ծանեւելով գործի մէջ, ինչ ասել կուզէ, իր հետ կը բերի մի նոր աւելի լուսաւոր հոսանք, բարեփոխելով այն շրջավայրը, ուր թաղաւորում էին հարստացած մոսկիները և դեռ կենդանի ТѢТѢТѢ-ները:

Մատնացոյց անենք և այն տխուր հանդամանքի վրա, որ այս բոլոր բեֆօրմները գրեթէ բացառապէս վերաբերում են Ռուսաստանի ներքին նահանգներին: Իսկ Վոլկսայ Երբ կը դառնայ հասարակից անդամ ներքին նահանգներին, ահա հարց, որ պիտի հետաքրքրի ճշմարիտ հայրենասէրին, Ռուսաստանի շահերի պաշտպաններին, որոնք այս անուան տակ թաղնիկները զբաղված են ֆանտաստիկական սեպարեմի հետ կռիւով:

Պետրոս Զաքարեանց

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

Նոյեմբերի 25-ին, «Շղթաներ», հեղինակութիւն էշխան Սուլթանովը, Թաքաճ Ա. Մ.

Շղթան ասում է, որ եթէ քաղաք ուշադրութեամբ նայի երեսուն ներկայացում, ինքը ևս կարող է մի նոր դրամա գրել: Ռուսաստանում ամենից շատ իշխան Սուլթանովն է արդարացրել այդ աֆօրիզմը: Բայց հալիւ թէ գերմանական համաժողով մի և նոյն ժամանակ ուղեւալիս լինելը ասել, որ արուստակալութիւնը ընտելանալով կարող է արուստի հասնել: Իշխան

Սուլթանովի երկի մէջ կան հետաքրքիր հոգեկան վարկեանքներ, բայց դրանց ամբողջութեան մէջ չը կայ ներդաշնակութիւն, չը կայ հոգեբանական հետեղականութիւն: Պարզ է, որ զբաղմունքներ են, որոնց ծագումը պիտի փնտռուի Малайя Театра-ի բեմադրողների մէջ: Դա մի տեսակ դրամատիկական մօզայիկա է: Ոչ միայն դրամայի սկզբնաւորութիւնը, դարձապէս և ելքը սերտ կերպով և անպայման հետեղականութեամբ կապված չեն միմեանց հետ, այլ նոյն իսկ անձնաւորութիւնների հոգեբանական կազմուածքն էլ կրում է մօզայիկայի կիւղ: Դրամատիկական մօզիկա այն հանգամանքների մէջ, որ տալիս է հեղինակը, չէր կարող անխուսափելի կերպով առաջ բերել այն դրոմիւններն ու յարաբերութիւնները, որոնց կազմում են դրամայի ընթացքը: Հոգեբանութեան պատճառաբանված չէ մարառող ոյժերի դրոմիւնը՝ չօջափած չըջանի մէջ. անբացատրելի են թողնված այդ շրջանի յարաբերութիւնները՝ կծու և հալածող դէպի մի կողմը, չափազանց ներողամիտ, նպաստաւոր դէպի միւս կողմը:

Սուլթանովի դրամայի արժանաւորութիւնը նրա զաղափարի մէջն է: Մի կողմից հեղինակն ուղղում է ցոյց տալ, որ յանցաւոր կեանքի մէջ կայ կորուստեան սաղմ, որ այդպիսի կեանքը վերջի վերջոյ շղթայ է դառնում, որից չը կայ փրկութիւն: Միւս կողմից ձգտում է չեղտել կեանքի տրագիկական գծերից ամենաանտանդին, թէ ինչպէս հասարակական խմբերը, իրանց յարաբերութեամբ դէպի կարգին մարդիկ, երբեմն ներկայացնում են կատարեալ բարոյական հակասութիւն: Մի ֆրանսիացի հեղինակ մի և նոյն միտքը աւելի անպայման և ծայրայեղ կերպով է արտայայտում: «Ալիսաբը», ասում է նա, սրբակաների դաշնակցութիւն է՝ ուղղված աշխուժարկի մէջ: Եւ չօջափելով կեանքի այդ թահապալայից դէմ, իշխան Սուլթանով չէ լափանցել, չէ ըմբռնել տրագիկական երևոյթի էությունը: Բացի զաղափարից, որը գեղարուեստորէն չէ արժարժված, պիտի ունեն և մի անվիճելի արժանաւորութիւն—խիտ բեմական է, կազմված է անշնչաւոր զործողութիւններից, լուր զըրոյցալուսութիւններ ինչ են ընդհատում նրան. մի հանգամանք, որ ցոյց է տալիս հեղինակի փորձված դերասան լինելը:

Դրամայի ներկայացման մէջ տիկին Սիրանոյշ Վալինցիկայի դերում պարզեցն հասարակութեանը հազարավոր գեղարուեստական տեսարաններ, իլլուզիայի հասցրած, մանաւանդ այն վարկեանքներում, երբ նա ներդրութիւն է աղբրում իր ամուսնուց և ինքնասպանութեան նախընթաց քայլերից: Նրա խաղը երբեմն յիշեցնում էր ռուսաց բեմի ամենամո գոհար տիկին Նրեմոյսային: Դարանիւնայի դերում օրիորդ Վարիկեր գոհացուցիչ էր: Այդ տիպը բաւականաչափ շինծու է, ոչ էլ կարողանում էր ընդհատել իր անհոգութեան ընդ. ըստ բընաւորութեան, որ ինչ որ չիլովութիւն է՝ դաւանալ անխաղ յատկութիւնների: Այդ պատճառով դժուար է դերասանուհուն այդ տեսակ տիպի ներկայացնելիս մի զգալի բան անել, քանի որ քաղաքային ինքնավարութիւնը զբաղված է անընական պայմանների մէջ: Նրկուսից մէկը կամ այդ տիպին բնաւորութեամբ ուրիշ դրոմիւն պիտի ունենար: Տիկին Մելքեան վատ չէր դեռահաս Օրգայի դերում, բայց չը պիտի մոռանալ, որ մարդ անգոր է ժամանակի առաջ: Տիկին Փաւանձմ առհասարակ հմուտ դերասանուհու տպաւորութիւն է թողնում և բաւականաչափ աշուղ է իր դերերում, միայն մի ինչ որ միակեանքութիւն կայ նրա խաղի մէջ. այս անգամ վատ չէր պառաւ Գարանիւնայի դերում: Պ.պ. Պետրոսեան և Արէլեան՝ առաջինը Պրօպրիէի, երկրորդը Վալինցիկայի դերերում բաւականաչափ աշուղ էին: Պ. Վրոյր Թօրօսովի դերը խաղաց իր սովորական կօծիվով, բայց բաւականաչափ արիւնտօկրատ չէր:

Յ. Սաղաթէլեան

ՆԱԽԱԿ ՎԱՂԱՐԵՍՊԱՏԻՑ

Երեւանի մէջ տարածված է ծաղիկ հիւանդութիւնը. պատահում է, որ օրական 3—4 երեխայ է մեռնում: Մեռնողներ կան նաև չափահասներ: Մէջ այլ հիւանդութիւններից, ի հարկէ մեծ մասամբ չըբար դասակարգից, որ միանգամայն զուրկ է բժշկական օգնութիւնից, յարմարաւոր բնակարանից և կանոնաւոր սննդից: Այս անեղ զոհերի միակ պատճառը գիւղական տանուտէրի տղատութիւնն է, որ անցնել տարվա յարուցած և հասարակութեան մէջ արձադանք գտած սեփական բը-

միջկ ունենալու հարցը առ կախ է թողնված և մինչև անգամ մոռացութեան մատնված:

Այստեղի դպրոցները, օրիորդաց և տղայոց, նոյեմբերի 24-ին, մաղմանք կատարելուց յետոյ, յայտարարվեցին պաշտօնապէս բացված, որի մասին առաջ-ուսուցիչը հեռագրով յայտնեց ժողովրդական դպրոցների վերադառնալու: Խնդրատունների թիւը անց է 400-ից, սակայն յարմարաւոր բնակարան չը գտնելու պատճառով ընդունված են՝ 120 աղջիկ և 140 տղայ: Տեսնելով մեծ կարիք ուսման մէջ, ուսումնարանական վարչութիւնը որոշել է բանալ և մի զուգընթաց բաժանմունք տղաների համար, ուր պէտք է ընդունվեն 60 տղայ: Ընդունելութիւնը կատարվում էր վիճակով, իսկ որին վիճակը չէր դուրս գալիս, արտասվելով էր հեռանում դպրոցից. եղել են և այնպիսիները, որոնք բացի օրերով արտասվելուց, օրերով հաց չեն կերել և դպրոցի դռներից չեն հեռացել ամբողջ օրը:

Աւրախայի է, որ խնդրատունների մէջ կան նաև բազմաթիւ դաղթականներ, որոնց աղջիկները համարեան ամբողջովին ընդունված են, իսկ տղաներից ոչ ոք դեռ ևս չէ ընդունվել տեղ չը լինելու պատճառով. սակայն եթէ նոր բացվելի զուգընթաց բաժանմունքի համար յարմար բնակարան գտնվի, որոշված է ընդունել նաև դաղթական տղաներից:

Որքան մեզ յայտնի է կոնսիստորիաների կարգադրութեամբ արգելված է դաղթականների պսակի ձէսը կատարել, եթէ նոր ամուսնացողներ չեն ներկայացնի իրանց ծնական քահանայի կամ առաջնորդի վկայականը. սակայն հակառակ այս կարգադրութեան, մեր վիճակի գործակալ Արսէն քահանայ Ձոհրաբեանց թոյլատրել է Գիւղու գիւղում բնակվող մի ամուսնացած և կին ունեցող 45—50 տարեկան դաղթականի պսակվել մի 17 տարեկան դաղթական օրիորդի հետ. դրանց պսակի ձէսը կատարվել է Հաջիլար գիւղի եկեղեցում:

Թէ ինչպէս է յաջողվել կին ունեցող 45—50 տարեկան դաղթականին պսակվել կրկին անգամ, այն ևս մի 17 տարեկան օրիորդի հետ, առ այժմ դաղթներ է պահած. սակայն չար լեզուները ասում են, որ այդտեղ կաշառքը մեծ դեր է խաղացել...

Հաստատ աղբիւրից տեղեկացանք և անձամբ ստուգեցինք, որ նորապսակ դաղթականն ունեցել է Գիւղու գիւղի Թաղէոս քահանայի մօտ պահ տված 50 հատ ոսկի դրամ և 200 ռուբլի չափ թղթային և այդ գումարն ամբողջովին ստացել է Թաղէոս քահանայից պսակվելուց մի երկու շաբաթ առաջ: Հրաւիրում ենք հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը այս ապօրինի դէպքի վրա:

Ութ ամիս չարուհակ անձերն երես չը տեսնելուց յետոյ այսօր, երբ սպասում էին ձիւնի, գալիս է մեղմ անձրև: Նդանալը թէև աշնանային է, սակայն սպառնող ձմեռվայ սարսափը պատել է դաղթականներին ու չըբարներին, որոնք զուրկ լինելով տաք հագուստից և ցամաք հացից, չը գիտեն ինչպէս դիմաւորել և ինչպէս անցկացնել ձմեռվայ ցրտերը: Անհաշիւ է այն խնդրատունների թիւը, որոնք հաց և հագուստեղէն են խնդրում Վեհափառ Վաթիկոսից: Ամեն օր հարիւրաւոր կիսամեկ և քաղաքի դաղթականներն անցնում են վեհարանի առաջ և արտասուքն անցնում օգնութիւն են խնդրում Օգնութիւն խնդրողները մեծ մասամբ կանայք են մանր երեխաների հետ միասին: Վեհափառ կարգադրութեամբ ամեն մի դաղթական ընտանիքին բաժանվեցաւ 2—4 ռուբլի դրամական օժանդակութիւն և մասնաւոր հաղուստեղէն: Գաղթականի վիճակը մեղ մօտ թէև ոչ մի կերպ ապահովված չենք կարող համարել, սակայն ի նկատի ունենալով օժանդակութեան չնչին գումարը և կարօտների թշուառ վիճակը, ցանկալի էր, և աւելի նպաստաւոր հարմար կը լինէր, եթէ օգնութիւն հասցնվէր գլխաւորապէս այն ընտանիքներին, որոնք զուրկ են աշխատող տղամարդուց և անկարող են սեփական աշխատանքով կերակրել իրանց անտէր երեխաներին. այն ինչ օգնութիւն են ստացել և այնպիսիները, որոնց վիճակը ապահով է և այնքան էլ օգնութեան կարօտութիւն չունին, որ կրկին համարվէր անհարկներն զրկել՝ նրանց բաժին հասցնելու համար:

ՆԱԽԱԿ ԽՊԲԱԳԻՈՒԹԵԱՆ

Վերին-Աղդան, դեկտ. 6-ին

Թոյլ տուել, խնդրեմ, «Մշակ» միջոցով սրբապետ շնորհակալութիւն յայտնել այն բարի գանձակցիներին, աղտասփայլներին և դիւրանցիներին, որոնք յայտնի գիւղական երեխաների կրթութեան, սեպտեմբերից մինչև այսօր

մեր դպրոցին ուղարկել են 150 բուրձի Կրկին և կրկին ազնիւ սրտերին դիմելով՝ նրանց ուշադրութիւնն ենք հրաւիրում գիւղական այս խաւար անկիւնի վրա:

Յակովբ ք. Սասիկեանց

ՆՍԻՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երէկ, ուրբաթ, դեկտեմբերի 11-ին, ցերեկվայ ժամը 1-ին այցելեց Կովկասի կառավարչապետ իշխան Փօլի-ցինին:

Երէկ, դեկտեմբերի 11-ին, Իւրիւմի համալսարանի բեկտորի անունով ուղարկեցինք հարիւր քսան բուրձի համալսարանի հայ չքաւոր ուսանողներին ուսումնախնայակի հաշուին:

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի անու-նով հիմնված Կոյրերի հոգաբարձութեան կով-կանեան ճիւղի թորհուրդը ինդրում է մեզ տը-պել հետեւեալը. «Թորհուրդը, այս տարվայ սեպ-տեմբերի 25-ին կայացած իր նիստում, ընենելով ճիւղի եկամուտները շատացնելու հարցը, կանգ առաւ այն բանի վրա, որ գրավոր-պատկերները մի ցուցանանդէս կազմակերպի այն գեղեցիկ հաւաքածուից, որ ունի տիկին Ս. Ֆօն-Պար-կաուս, որ միշտ վերին աստիճանի համակրու-թեամբ է վերաբերվել Հոգաբարձութեան գոր-ծունէութեան: Յուցանանդէսի հանդիսաւոր բա-ցումը տեղի ունեցաւ նոյեմբերի 1-ին, ղրնուո-րուաւոր անձանց ներկայութեամբ: Բացման օրը դրամական նուէրներ ստացվեցին դանազան անձերից 986 ր. 80 կ., որի մի խոշոր մասը նուէրից իշխան Բագրատին: Սովորաբար Նրան նուէրներն և յետոյ, որոնց մէջ աչքի է ընկնում Մեծ Իշխան Նիկողայ Միխայլովիչի նուէրը, Ա. Մանիշաշվիլի նուէրը՝ 1000 ռուբլի: Մուտք ցուցանանդէսից եղաւ, տոմսակների և ցուցակ-ների վաճառումից՝ 377 ր. 35 կ., կոյր երե-խաների ձեռագործների վաճառումից՝ 261 ր. 14 կ., գանձանակներից ստացված 37 ր. 76 կ., անասնապահական վճարներից՝ 220 ր., ընդամե-նը կոյրերի օգտին ստացվել է 3987 ր. 10 կ.: Ծախս եղել է ընդամենը 180 ր. 37 կ.: Յու-ցանանդէսը այցելել են երկու շաբաթվայ ըն-թացքում՝ 934 հոգի, բացի դրանից՝ նաև 412 աշակերտաւ:

Օրիորդ Թամարա Տէր-Ստեփանեանի կօնցըր-տը, որ տեղի ունեցաւ հինգշաբթի, դեկտեմբերի 10-ին, զբաղեցրեց բաւական մեծ բազմութիւն Քիֆլիսի Ժողովարանը: Օրիորդ տեխնիկայի մէջ արել է անուրանալի առաջադիմութիւններ: Թէ խոշոր և թէ մանր կտորների մէջ նա ցոյց տուեց խաղի կատարելագործութեան նմուշներ: Այդ տեսակետից շատ աջողկեցին Բալակիրեվի L'alouette և Գոպլիի Berceuse և Polonaise-ը: Խոշոր ստեղծագործութիւններից մեծ հմտու-թեամբ անց Գաուլի Պարտի Եվգենի Օնեգինը և Նոյնդէս Լիստի Sonetto di Petrarca: Դրանց մէջ աչող արտայայտված էին պիւնների ընո-րոշ ամբողջութիւնը: Օրիորդ կօնցերտի սկզբին շատ յուզված էր. այդ պատճառով Բեթօլէի fis-dur սոնատը, որ սկսեց մեծ աշողութեամբ և ոգեւորութեամբ, կորցրեց երկրորդ մասում իր բաժնովութիւնը: Մենք հաւանքեցինք և Արենս-կու Bigarrures: Հասարակութիւնն ընդունեց օրիորդին ջերմ ծափահարութիւններով և կերե-նել տուեց մի քանի պիւններ:

Այսօր, շաբաթ, դեկտեմբերի 12-ին, երեկոյ-եան, Քիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի կունենայ Տեխնիկական ընկերութեան նիստը, որտեղ կը կարդացվեն մեր երկրի տը-ստեութեան համար նշանակութիւն ունեցող գե-կուցումներ՝ ջրամբարների, քանիքներին և ան-տառաբուծութեան մասին:

Մայրաքաղաքի լրագիրները հազարգում են, որ պատահաբար կան գլխաւոր վարչութիւնը նախագիծ է, ինչպէս լավում է, պակասեցնել պարբերական հրատարակութիւններն ուղարկե-լու սակագինը:

Վաղը, կիրակի, դեկտեմբերի 13-ին, Հալա-բարում բացվելու է առաջին մանկական տունը ձրի ճաշարանով: Այդ տունը և ձրի ճաշարանը հիմնում է Մանուկների խնամատար ընկերու-թեան վարչութիւնը՝ անտէր և անխնամ մնացած երեխաների համար: Բացման հանդէսը և առա-

ջին ճաշը մանուկներին համար տեղի կունենայ ցերեկվայ ժամը 1-ին:

Շատերը սովորութիւն ունեն թղթագրամների վրա դանազան նկատողութիւններ դրել կամ դրոշմներ խիլել: Պետական բանկը այժմ պաշ-տօնապէս յայտնում է, որ նոր պատրաստած հարկի բուրձանոցների վրա եթէ այսուհետև նկատվեն որ և է նշաններ, կարգադրված է որ դանազանները և պետական բանկի բաժան-մունքները չընդունեն այդ տեսակ փողը, և միայն Պետերբուրգի կենտրոնական վարչու-թեան մէջ կը թողարկվի փոխանակել այդպիսի թղթագրամները:

Նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 4-ը Կարմիր Նաչի ընկերութիւնը նուիրաւորութիւն-ներ ստացել է 515,524 ր. 75 կօպէկ: Այդ գու-մարից վճարված է ուղարկել՝ Պէրմ—25,000 ր., Սիմբերսկ—50,000 ր., Սիզդան—20,000 ր., Մէնսկէլինսկ—25,000 ր., և Սարատով—20,000 ր.: Կարմիր Նաչի զինաւոր վարչութեան կող-մից անբերրութեան մատնված նահանգներն ուղարկված փողերի ընդհանուր գումարն է 475,000 ռուբլի:

ՂԱՋԱՆԻ գաւառից մեզ հաղորդում են, որ Քրեւեման գիւղում այս տարի հունձը եղել է շատ սահմանափակ և գիւղացիներն այժմ մեծ կարօ-տութեան մէջ են:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ձեռք կարող ու-րախութեամբ չարձանագրել այն ջերմ համա-կրութիւնը, որը ցոյց է տալիս Բագուի հայ հա-սարակութիւնը դէպի իր մայրենի բնակ: Այս-քան եռանդով թատրոն յաճախել մի պատա-հակա երեւոյթի արդիւնք է, այլ ապացոյց, որ մեր այստեղի հասարակութիւնն ընտելացել է հայոց ներկայացումներին, որ նա այժմ բաւականութիւն է գտնում այդ ներկայացում-ների մէջ: Երեւում է որ հայը, գտնէ մեծամաս-նութիւնը, «աղղաբարբար» է թատրոն յաճա-խում: Մի շարք ներկայացումներ եղան, երբ ամբողջ դահլիճը լի էր լինում հասարակութեամբ, յաճախ էլ տաննակներով վերադառնում են տեղ չը լինելու պատճառով: Անկեղծութեամբ ողջու-նելով մեր հասարակութեան այս պատուաբեր ինքնապատկերութիւնը, ցանկանում ենք նորից և ապագայում. իսկ թատրոնին—որ նա լինի պատկառելի: հիմնարկութիւն,—ընդունակ դէպի իրան գրաւելու թէ հասարակութիւն և թէ բնա-կան նոր գործիչներ»:

ՓԹԹԻՑ մեզ գրում են. «Այստեղ սաստիկ տարածված է ծաղիկ հիւանդութիւնը, որով վա-րակված են ոչ միայն երեխաները, այլև հասա-կաւորների մի զգալի տոկոս: Սանիտարական ամեն միջոցներ ձեռք են առնում չնորհիւ քա-ղաքիս բժիշկ պ. Ն. Տէր-Նիկողայանեանի, որի հակողութեան տակ պատուաստում են քաղա-քային բուժարանում օրական մինչև 20—25 հո-գու—երեխան և թէ հասարակութիւնը: Հիւանդութեան տարածվելուն նպաստում են տեղական ժողո-վրդի աղքատ գրութիւնը, խնամ. բնակարան-ները և անխախտեմբի մոռնողը»:

ԿԱՂՋՈՒՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 26-ին կառավարութիւնը փակել այստեղի ժա-մանակաւոր աշօթատունը, որովհետև հնութեան պատճառով նա քանդվելու վտանգ էր սպառ-նում: Տեղացի ժողովուրդը, առ այժմ մի ուրիշ երբ չը գտնելով, խնդրագիր ուղարկեց Կարսի նահանգի զորքաների վերահսկին, որ նա ժա-մանակաւորապէս թող տայ հայոց նախկին զբա-րոցի շինութեան մէջ ժամերգութիւն կատարե-լու: Լիայոյս ենք, որ յարգել տեսուչը չի մեր-ժի բազմաթիւ խնդրողների աղբսանքը, մանա-կանի, որ զարկել շինութիւնն անխնամ մնա-ցած լինելով, քարոքաւոր է եղել և կարելի է նրան վերանորոգել եկեղեցական փողով»:

Շուշու գաւառի ԳԻՇԻ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղի Խաչատուր քանանց Գրիգորեանց պարսը է տալիս իր հարեան Գարութիւն Գրի-գորեանցին 70 ռուբլի: Անցնում է 6 տարի, այս ժամանակամիջոցում նա առնում է տոկոս 4 դէզ խոտ, որ արժէ 80 ռուբլի, այլ և Գարութիւնի այգու կէտը, որի միջով ջուր է տանում իր այգին: այգու կէտը կարելի է գնահատել 200 ռուբլի: Բայց դրանով չէ բաւականատու քա՛հա-նան: Գարութիւնի որդին օտարութեան մէջ էր 7 տարի, երբ վերադառնում է գիւղ, քա՛հա-նան ստանում է նրանից 100 ռուբլի և այդպէս վերջացնում իր սարսափելի հաշիւը: Գուրն է գալիս, որ վեց տարվայ միջոցում վախառու տէրտէքը առնում է 310 ռուբլի տոկոս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈԼՊՈՐԻՍԵՑՑ

ՍԻՐԻՍՏՐԻԱ, նոյեմբերի 28-ին
Երկրի հակահատակաբանական մասունքն քննա-դատած և միշտ պնդած է այն, որ բոլոր ժո-ղովուրդն այժմ չը առնեն ոչ համակրանք իւր իշխանին (բացի դահաժառանգէն), և ոչ վտա-նութիւն իւր նախարարութեան, երկրի ունեցած այժմեան ներքին և արտաքին քաղաքակա-նութեան նկատմամբ: Այնպէս որ՝ իշխանը և իր նախարարութիւնը, ներքինապէս, եղած կը լինէին աւտորիտէներ և շարատան-սիրողներ երկրի ազատարարն: Իսկ այժմեան նախարա-րապետն, Ստոյոյով, բոլոր ժողովրդան մէջ ծա-ւալած այս կամ այլ ամեն տարածանալ համո-զումներն ի նկատի առնելով՝ Սորբանիոյ մէջ ընդարձակ ճառ մ'արտասանեց, զոր համառօ-տաբար պիտի պատկերացնեն այսպէս. 1) թէ բոլորքան լաւագոյն յարաբերութեանց մէջ կը գտնուեն ամեն տէրութեանց հետ. 2) թէ նա երբեք գտնուած չէր այսօրինակ բարեբար կա-ցութեան մը մէջ. 3) թէ նա յաջողած էր ձեռք բերել, թիւրքիոյ մէջ, չորս առաջնորդարաններ և եօթը վաճառականական գործակալութիւն-ներ՝ անդ ի ժողո, հաւանաբար, իւր նպատակ ներուն համար, դաշնագրութիւն մ'ալ ձեռք բերելու յոյսով. 4) թէ ասոնք մեծագործու-թիւններ էին Բոլղարիոյ համար, մանաւանդ Րումանիոյ հանդէպ՝ որ դժուարացաւ գէթ ա-ռաջնորդարան մը ձեռք բերելու ի Մակեդոնիա, որուն համար նա այնքան աշխատեցաւ, և մի-այն վերջերս կրցաւ կրելու ուսումնա-թիւրական վաճառականական դաշնագրութիւն մը. 5) թէ Բոլղարիա յոյս կունենար, խաղաղասիրական մի-ջոցներով Սկիւպինիոյ այլապէս ապգութեանց մէջ հաւատարապէս տեսնել ընդհանուր բարենո-րոգումներն. 6) թէ այժմեան նախարարութիւնն անդու պիտի շարունակէ իւր քաղաքական գոր-ծունէութիւնը մինչև այն առնեն, երբ բոլոր ժո-ղովուրդն այլ ևս չը պիտի ուզէ վայելել զայն:

Յունաստանի աշխուրհեմքը ստացաւ իւր կրած վնասուց փոխարժէքը, տեսնելով այժմ Կրե-տէն ազատուած և իւր աջակցողին փառաւորա-պէս նստած անոր դահու վրա: Բոլղարական մասունքը կը վերադրէ Յունաստանին այս աշխուր-թիւնը՝ իւր մէջ գտնուող այն ազատական կու-ռակցութեանց, որոնց շնորհիւ նա միշտ սիրելի եղած է Անգլիային, Ռուսիային, Ֆրանսային և որոնք այժմ, իրարու ձայնակցելով՝ իրագործե-ցին Ռուսաստանի արած նշանաւոր առաջարկն: Կրետէի մասին, ինչպէս որ եղաւ Թէսալիոյ խնդրոյն մէջ Այս եղաւոր հարցին կարգա-դրուելով մէջտեղ եղաւ այն հարցը, թէ ինչ պիտի լինի Մակեդոնիոյ և Հայաստանի այժ-մեան ամենախոնարհ կացութիւնը և ինչպիսի վախճան մը պիտի տրուէր ասոր: Այս թէ ինչ-պէս կը խորհրդածէ Ֆրանսական «Le Temps» օրագիրն, ի միջի այլոց անելով հետեւեալներն. «Տէրութիւնները կը մտածեն թէ ժամանակն է լրջօրէն խորհել այն վտանգին վրա, որ կը ներ-կայացնէ Մակեդոնիոյ այժմեան անիշխանութիւ-նը եւրօպական խաղաղութեան համար, և կան-խել պայթում մը, որ՝ եթէ յեղեան դալու լինի, պիտի կրնար առաջացնել ամենամանր հետե-ւանքներ: Շատ մը ֆակտորներ գործողութեան մէջ կը գտնուին թիւրքիոյ այս եւրօպական մա-սին մէջ և, կերպով թէ, օսմանեան կառավա-րութիւնը հաշիւ կառնէր զինք սպառնացող վը-տանգին համար: Նա չը գիտէր, որ եթէ Մա-կեդոնիոյ խառնակ կացութեան համար պէտք եղածն չանէ, տոյն նահանգին սահմանում է Կրետէի մի և նոյն բաղդն յաճախ առնել, և որ՝ Մակեդոնիոյ մէջ կենդանացած այն 180 զօրա-գունդներն չը պիտի արդեն տէրութիւններն միմիայն Աղբիւնաւորոյց նահանգէն սահմանա-գծել եւրօպական թիւրքեան: Թիւրքիան, վա-րուելու եղանակին մէջ, Փոքր-Ասիոյ հայերուն կը նմանցնէ Մակեդոնիոյ օսմանեան հպատակ եղող՝ ալբանացի, կաթոլիկ, սերբ, ուսման, բոլ-գար, կուցօ-վալակ յոյն քրիստոնեաները: Եւ, սակայն, մէջտեղ կայ տարբերութիւն մը: Եր-կուքն ալ—հայերն և Մակեդոնիոյ քրիստոնեա-նները—արդարեւ օսմանեան հպատակներ են, բայց առաջնորդներ չունեն են բաժանեալ հետե-ւաբար և ապիկար եւրօպային, մինչ երկրորդնե-րը նեցուկ գտած և պաշտպանուած են իրենց համացեղ եղբայրներէն... Տէրութիւնները որո-շած են խաղաղասիրական միջոցներ ի գործ դը-նել, նոյն այս ձաբան մէջ, թիւրքեան քնել և Մակեդոնիոյ մէջ անհրաժեշտ բարենորոգում-ները կատարել տալ: Եթէ այս միջոցներն ու-ղտած արդիւնքը չը տան, դարուն պիտի տես-նէ կայսրութեան համար դժբաղդութեանց նոր թրականի մը սկիզբն»:

Հետ յայտարարութեան բոլղարական «Մարթ» լրագրոյ, եւրօպական չորս մեծ պետութիւննե-րը՝ ի նկատի ունենալով Բերլինի կոնգրէսի տը-րամադրութիւնները՝ թիւրքիոյ քրիստոնէից մա-սին, այժմ, ի տես կրետական գործի կարգա-դրութեան, ծանուցադրով մը դիմած են թիւր-քիոյ իրագործելու իր քրիստոնէից համար նա-խագծուած «հանրաժամութեամբ» բարենորոգումներն: Թրքաց չէյն-իւ-իւլումը նախագուշակելով կայս-րութեան միւս քրիստոնէից կրետացոյ բաղ-դակցելու «անմիջական» ցանկութիւնը, իրենց այս «ցանկութիւնը» գոհացնող (?) տեղեկագիր մը կը ներկայացնէ սուլթանին, որը և կենդանի դայն: Շէյն-իւ-իւլումի այս քայլը չնանակեր «ուրիշ» բան, բայց եթէ «առջին առնել» եւրօ-պական չորս մեծ տէրութեանց թիւրքիոյ մա-տուցած ծանուցադրին, «ցոյց տալով մանա-կանի այն, որ թիւրքեան արդէն մտադիր է... չիրագործել «խոտաշած» բարենորոգումները: Բոլղարական «Бѣл. Търгов. Вѣст.» լրագրին Կ. Պօլսէ կը տեղեկագրուէր, ի միջի այլոց, նաև հետեւեալը. «Մասնականից եղող հայոց վիճակն աննախանձելի դրութեան մը մէջ կը գտնուի, այնպէս, որ ուսաց դեսպանը, Չինովիկ, չա-րուակ ստիպված է հրաւիրել Դրան ուշադրու-թիւն ի Վան, Բիթլիս և այլ վիլայէթներու մէջ տիրապետող անիշխանութեան վրա: Հայոց թիւրքիա վերադառնալու հարցը, մինչև այսօր, լուծված է միայն ակադեմականապէս և դարմա-նալի չէ այն, երբ իրականապէս ուս դիւանա-դէտի մը սն պարբերութիւնը. «Nous revien-rons à la question arménienne»:

Ալգար

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիայում շարունակվում են պատերազ-մական պատրաստութիւնները. նոյեմբերի 30-ը իշեցրին երկու հազար մարտական, իսկ եր-րորը կառուցվում է. մասնագետները հաւա-տացնում են, որ դրանց պէս ուժեղ պատերազ-մական նաւեր գոյութիւն չունեն այսօրան են Յայտնի արմատական պատրաստաւոր Լաւուշը Մանչեստրում արտասանած ճառի մէջ ասաց. «Անգլիացիները, կարելի է ասել, ամենահարուստ ազգն են աշխարհում: Եօլիստանի ներքինում-ներով գործելով, անգլիացիները, մեծացնելով իրանց նաւատորմը, ինչպէս որիչ ազգերն են մեծացնում, այս խաղի մէջ կը հասնեն այն աստիճանին, որ կը չինեն վերջին նաւը: Սա-կայն այսպիսի արջակցութեան հետևանքն այն կը լինի, որ հարեան ազգերը կը մանկանան, իսկ անգլիական ազգը կաղքատանայ»:

«Rivista d'Italia» լրագրի մէջ տպվել է խա-րական նախկին մինիստր Կրիպիի յօդուածը՝ Արեւելքի քրիստոնեաների պաշտպանութեան հարցի մասին: Նա ասում է, թէ Բերլինի դաշ-նագրերը դրականապէս հաստատել է, որ քրիս-տոնեայ պետութիւններն իրաւունք ունեն հո-վանաւորել իրանց հպատակներին Արեւելքում: Զանաչել մի և նոյն ժամանակ Պրանիայի նախկին առանձնաշնորհութիւնները, այդ կը նշանակի ընդունել, որ նրան է պատկանում բացառապէս իրաւունք պաշտպանել սուլթանի քրիստոնեայ հպատակներին: Շնորհիւ այդ վա-ղեմի առանձնաշնորհութեան, ինչպէս և շնորհիւ Լիւթի պրօպագանդայի քաղաքական գործու-նէութեան, Պրանիայի չափից դուրս տարածվեց իր աղեղնութիւնը Արեւելքում և հպատակացրեց իրան Վատիկանը, որովհետև կաթոլիկ առաքե-լութիւնները Արեւելքում բաղկացած են զլիսա-ւորապէս Ֆրանսիայի կրօնաւորներից, իսկ այդ առաքելութիւնները ծառայում են ոչ թէ կրօնին, այլ Պրանիայի յաճախ Վերանախկին կայսրի ուղեորութիւնը վերջ դրեց այդ շարքին:

«Gaulois» լրագիրը հաւատացնում է, որ քաղաքական չըջաններում լուրջ կերպով զննում են Պարիզի նահանգապետի պաշտօնը ոչ-զինու-րականին տալու հարցը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Прав. Вѣст.» լրագրում հետաքրքիր տեղե-կութիւններ են տպված ուսուց գաղթականու-թեան մասին Ամերիկայի Միացեալ-Նահանգնե-րում: Յայտնվում է, որ քաղաքի դարի ընթաց-քում 1873 թիւ յուլիսի 1-ից մինչև 1897 թիւ յունիսի 30-ը գնահատան ազգութիւններին պատ-կանող ուսանադատանքը գաղթել են Միացեալ-Նահանգները 722,472 հոգի. 1891 թիւից մինչև 1897 թիւը բուն Ռուսաստանից գաղթած ան-ձանց թիւը հասաւ 292,032 հոգու. Ֆինլան-դիայից գաղթել են 24,977 հոգի, Լեհաստանի թա-գաւորութիւնից—91,994: Մինչև 1890 թվաւորը գաղթականների թիւ մէջ գերակշռում էր լեհա-կան տարրը, ապա ուսանադատան հրէաները: Վերջինեայ լրագրի հաշուով, եթէ հանենք ուս գաղթականների ընդհանուր թիւից այն անձանց, որոնք ընդունել են Ամերիկայի հպատակութիւնը, և որոնք իրանց գաղթելու օրից կարող էին մեռնել նոր երկրում, ներկայումս Ամերիկայի Միացեալ-Նահանգներում ապրող ուսանադա-տակների թիւը հասնում է 440—450 հազար հոգու:

Արեւելքում թիւնը * Պետերբուրգում Բժշկապետ Մ. Գրիգորեւի, Պետերբուրգի Ժողո-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.